

**Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ
2020**

**«Նոյեմբերյանում կանանց և երիտասարդների համայնքային կենտրոնի ստեղծման» և
«Մարգահովիտ գյուղի դպրոցին մարգասարքերի տրամադրման» ծրագրերի
ստորագրման արարողություն**

2021թ. մարտի 19-ին, ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում տեղի ունեցավ «Նոյեմբերյանում կանանց և երիտասարդների համայնքային կենտրոնի ստեղծման» մինչև 70,955 ԱՄՆ դոլար և «Մարգահովիտ գյուղի դպրոցին մարգասարքերի տրամադրման» մինչև 21,300 ԱՄՆ դոլար ֆինանսավորմամբ՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի (ՖՏ 2020) համար դրամաշնորհային աջակցության երկու պայմանագրերի ստորագրման արարողությունը:

Արարողությանը ներկա էին ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Ջուն Յամադան, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ, պարոն Արթուր Մարտիրոսյանը, Հայ առաքելական եկեղեցու Տավուշի թեմի առաջնորդ Տեր Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը, «Մարգահովիտ» երիտասարդական կենտրոնի նախագահ, տիկին Էմիլիա Մարտիրոսյանը և այլք:

«Նոյեմբերյանում կանանց և երիտասարդների համայնքային կենտրոնի ստեղծման» ծրագրի նպատակն է Նոյեմբերյան քաղաքում կառուցել նոր համայնքային սոցիալական-կրթական կենտրոն, որը կծառայի քաղաքի և հարակից գյուղերի մանկահասակ և մեծահասակ բնակչությանը: Ծրագրի ավարտից հետո ավելի քան 250 երիտասարդներ, կանայք և երեխաներ հնարավորություն կունենան ստանալ կրթական աջակցություն, սոցիալական ծառայություններ և մասնագիտական ուսուցում: «Մարգահովիտ գյուղի դպրոցին մարգասարքերի տրամադրման» ծրագրի նպատակն է՝ խթանել Մարգահովիտի երեխաների և երիտասարդների առողջ ապրելակերպը և կրթական զարգացումը: Դրամաշնորհը կուղղվի կահավորված մարգահրապարակի ստեղծմանը, որից հնարավորություն կունենան օգտվել; համայնքի ավելի քան 400 աշակերտներ, ինչպես նաև 3000 մեծահասակներ:

Ջերմորեն ողջունելով բոլոր հյուրերին՝ պարոն Մարտիրոսյանը իր երախտագիտությունն հայտնեց Ճապոնիայի կառավարությանը և նշեց, որ այս ծրագրերը շատ կարևոր են Հայաստանի մարզերում տարածքային համաչափ զարգացման և աղքատության հաղթահարման համար: Փոխնախարարը շեշտեց, որ այս ծրագրերի շնորհիվ Հայաստանի գյուղական և մարգային համայնքներում կրթական հնարավորությունները կընդլայնվեն՝ խթանելով որակյալ սոցիալական ծառայություններ, ինչպես նաև առողջ կյանք:

Իր հերթին դեսպան Յամադան նշեց, որ այս երկու ծրագրերը կիսում են մեկ ընդհանուր նպատակ, այն է՝ աջակցել մարդկանց կյանքի և կենսապայմանների բարելավմանը՝ «Մարդկային

անվտանգություն» հասկացության շրջանակում, որը անչափ կարևորում է Ճապոնիայի կառավարությունը:

Տեր Բագրատ եպիսկոպոս Գալստանյանն իր խոսքում նշեց, որ սա արդեն երկրորդ ծրագիրն է, որին աջակցում է Ճապոնիայի կառավարությունը: Առաջին սոցիալ-կրթական կենտրոնը բացվել է Իջևանում, և ավելի քան 400 երեխա և մեծահասակ արդեն մասնակցում է այնտեղ իրականացվող ծրագրերին: Եպիսկոպոս Գալստանյանը շեշտեց, որ համոզված է, որ Նոյեմբերյանի կենտրոնը նույնպես կունենա նույն հաջողությունը:

Տիկին Մարտիրոսյանն իր խոսքում շնորհակալություն հայտնեց դեսպան Յամադային բացառիկ հնարավորության համար և հավաստիացրեց, որ բոլոր ջանքերը կգործադրվեն ծրագրի սահուն իրականացման համար:

Ելույթներից հետո, նախ դեսպան Յամադան և եպիսկոպոս Գալստանյանը ստորագրեցին «Նոյեմբերյանում կանանց և երիտասարդների համայնքային կենտրոնի ստեղծման» դրամաշնորհային պայմանագիրը, այնուհետև դեսպան Յամադան և տիկին Մարտիրոսյանը ստորագրեցին «Մարգահովիտ գյուղի դպրոցին մարզասարքերի տրամադրման» դրամաշնորհային պայմանագիրը:




Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի փոխնախարար պարոն
Մարտիրոսյանի ելույթը



Դեսպան Յամադայի ելույթը



Դեսպան Յամադան և եպիսկոպոս
Գալստանյանը դրամաշնորհային
պայմանագիրը ստորագրելիս



Դեսպան Յամադան և տիկին
Մարտիրոսյանը դրամաշնորհային
պայմանագիրը ստորագրելիս



Արարողությունը



Արարողության հարգարժան մասնակիցները